

ԸՆԴՈՒՆՎԵԼ Է

«Բլոտի ազգային լիգա»
հասարակական կազմակերպության
հիմնադիր ժողովում

«24» դեկտեմբերի, 2010
Կազմակերպության լիազոր (Չարքաշ
կամ Անձևվեր)՝

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Իրավաբանական անձանց Պետական
Ռեգիստրի կենտրոնական Մարմնի
կողմից
Գրանցման օրը, ամիսը, տարեթիվը.

« ____ » _____ 2010

Գրանցման համարը _____
Պետական ռեգիստրի ղեկավար
Գ.Սարգսյան _____

«ԲԼՈՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԼԻԳԱ »

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԻԾ

Ա. Ընդհանուր դրույթներ, կազմակերպության իրավական կարգավիճակը

1. «Բլոտի ազգային լիգա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ինքնուրույն, շահույթ չհետապնդող եւ ստացված շահույթը մասնակիցների միջեւ չբաշխող (ոչ առեւտրային) հասարակական կազմակերպություն է, որը գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, Հայաստանի Հանրապետության կողմից ընդունված միջազգային նորմերի եւ սույն կանոնադրության հիման վրա:

2. Կազմակերպությունը համագործակցում է պետական, միջազգային, հասարակական կազմակերպությունների, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց հետ:

3. Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է ինքնաֆինանսավորման եւ ինքնակառավարման սկզբունքով:

4. Կազմակերպության իրավաբանական հասցեն է.

ՀՀ, Գյումրի քաղաք, Ղանդիլյան փ., 27Բ շենք, 16 բնակարան:

5. Կազմակերպության լրիվ անվանումն է.

Հայերեն. «Բլոտի ազգային լիգա» հասարակական կազմակերպություն: Կրճատ՝ ԲԱԼ: Անգլերեն. “National Liga of Blot” Non Governmental Organization, short - NLB:

6. «Բլոտի ազգային լիգա» հասարակական կազմակերպությունը գործում է ՀՀ տարածքում, «Բլոտի ազգային լիգա» հասարակական կազմակերպությունը գտնվում է նրա մշտական գործող վերադաս մարմնի գտնվելու վայրում՝ կազմակերպության իրավաբանական հասցեով:

7. Կազմակերպությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

8. Կազմակերպության կանոնադրության փոփոխություններն ընդունվում են Կազմակերպության ընդհանուր ժողովում եւ իրավաբանական ուժ են ստանում սահմանված կարգով պետական գրանցման պահից:

9. Կազմակերպությունն ունի խորհրդանիշով կլոր կնիք, որտեղ կա Կազմակերպության անվանումը հայերենով, ռուսերենով եւ անգլերենով՝ «Բլոտի ազգային լիգա» հասարակական կազմակերպություն», նաեւ կազմակերպության խորհրդանիշը.

(խորհրդանիշի պատկերը կցված է կանոնադրությանը): Ունի նաեւ դրոշմակնիք, ձեւաթղթեր, բանկային հաշիվներ, ունի իրավունքներ, կրում է պարտականություններ:

10. Օրենսդրությամբ ընձեռված իրավունքների հետ մեկտեղ Կազմակերպությունն իրավունք ունի.

- ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր եղանակներով ձեռք բերել կամ այլ պայմաններով ստանալ, այդ թվում՝ նաեւ անվճար, գույք, տրանսպորտային միջոցներ, հողատարածք, շենքեր, շինություններ, ինչպես նաեւ հիմնական եւ շրջանառու միջոցներ,
- պայմանագրային հարաբերությունների մեջ մտնել ֆիզիկական եւ իրավաբանական անձանց հետ,
- դատական կարգով վիճարկել իր շահերը ոտնահարած ֆիզիկական եւ իրավաբանական անձանց հետ, լինել հայցվոր կամ պատասխանող՝ դատարանում,
- որոշել Կազմակերպության ներքին կազմակերպչական կառուցվածքը, կառավարման համակարգը, ունենալ հաստիքային, արտահաստիքային եւ կամավոր աշխատողներ,
- Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում պետության պարտավորությունների, իսկ պետությունը պատասխանատու չէ Կազմակերպության պարտավորությունների համար:

11. Կազմակերպության վերակազմակերպման հետեւանքով նրա(նց) կանոնադրության (կանոնադրությունների) փոփոխությունները եւ (կամ) լրացումները կամ գործունեության

դադարումը, ինչպես նաև նոր ստեղծված իրավաբանական անձինք պետական գրանցում են ստանում օրենքով սահմանված կարգով:

12. Կազմակերպության փաստաթղթերը պահվում են առնվազն 3 (երեք) տարի:

13. Բլոտի ազգային լիզան բլոտի պաշտպանության, քարոզման եւ զարգացման հասարակական միավորում է, որը կազմվում է Բլոտը արժեւորող այն մարդկանցից, ովքեր ընդունում են այս Կանոնադրությունը, Բլոտ խաղի Վարքականոնը եւ խաղի Կանոնակարգը, միշտ հավատարիմ են մնում այս փաստաթղթերում ամրագրված սկզբունքներին եւ կանոններին, բարեխղճորեն վճարում են Բլոտի ազգային լիզայի անդամի անդամավճարը:

14. Այս Կանոնադրությունը ունի երկու անբակտելի հավելված.

ա. Բլոտ (բազար-բլոտ) խաղի Կանոնակարգը,

բ. Բլոտ (բազար-բլոտ) խաղի Վարքականոն:

Բ. Կազմակերպության գործունեության առարկան եւ նպատակները

1. Բլոտ (բազար-բլոտ) թղթախաղի ուսուցումը եւ տարածումը:
2. Բլոտ թղթախաղի ուսուցման եւ տարածման ուղղությամբ մրցաշարերի, դասընթացների կազմակերպում եւ իրականացում:
3. Բլոտ թղթախաղի զարգացման եւ տարածման նպատակով ասուլիսների, բանավեճերի եւ քննարկումների կազմակերպում, իրականացում:
4. Բլոտ (բազար-բլոտ) թղթախաղի տոնակատարությունների կազմակերպում, իրականացում:
5. Բլոտ (բազար-բլոտ) թղթախաղի ուսումնական բազայի ստեղծում:
6. Զարգացնել համագործակցությունը Բլոտ (բազար-բլոտ) թղթախաղի զարգացմամբ այլ շահագրգիռ կազմակերպությունների եւ անհատների հետ:
7. Ըստ անհրաժեշտության, օրենքով սահմանված կարգով, ստեղծել Կազմակերպության նպատակների իրականացմանն ու դրված խնդիրների լուծմանն ուղղված զանգվածային լրատվամիջոցներ, առևտրային կազմակերպություններ կամ մաս կազմել դրանց: Մշակել եւ հրապարակել հոդվածներ, բրոշյուրներ, գրքեր, քարտեզներ, հեռուստատեսային եւ ռադիո հաղորդումներ, հոլովակներ, ինտերնետային տեղեկատվություն, օրենքով չսահմանափակված եւ հանրային նշանակության տեղեկություններ Բլոտ (բազար-բլոտ) թղթախաղի մասին:
8. Վերը բերված նպատակների իրականացմանն ուղղված հրատարակչական եւ տպագրական՝ օրենքով սահմանված գործունեություն:

Գ. Կազմակերպության անդամ դառնալու եւ անդամությունից դուրս գալու կարգը

1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ՝ ՀՀ կամ օտարերկրյա ցանկացած քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձ, որն ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը, մասնակցում է նրա գործունեությանը, ունի Բլոտ (բազար-բլոտ) թղթախաղի առնվազն մեկ տարվա փորձ:
2. Կազմակերպության անդամներն ընդունվում եւ հեռացվում են Կազմակերպության Իմաստունների Ատյանի որոշմամբ:
 - 3.1 Կազմակերպության անդամ դառնալու համար թեկնածուն պարտավոր է.
 - համապատասխանել սույն կանոնադրության այս գլխի 1-ին կետի պահանջներին,
 - կազմակերպության Իմաստունների Ատյանին ներկայացնել.
 - ա) դիմում՝ անդամության ընդունման խնդրանքով,
 - բ) ինքնակենսագրական, որում պիտի նկարագրվի նրա՝ Բլոտ խաղում ունեցած փորձառությունը
 - գ) Կազմակերպության առնվազն երկու անդամի գրավոր երաշխավորագիր:

-Իմաստունների Ատյանի հրավերով, Իմաստունների Ատյանի նիստում պատասխանել Կազմակերպության անդամության վերաբերյալ Իմաստունների Ատյանի անդամների հարցերին:

3.2 Կազմակերպության Իմաստունների Ատյանը իր նիստում.

-ուսումնասիրում է թեկնածուի ներկայացրած փաստաթղթերը,

-կարող է լսել երաշխավորողներին,

-կարող է գրուցել թեկնածուի հետ,

-որոշում է.

ա) թեկնածուին ընդունել որպես կազմակերպության անդամ, կամ՝

բ) թեկնածուին չընդունել Կազմակերպություն՝ նշված պայմաններին չհամապատասխանելու պատճառով:

3.3. Կազմակերպության Իմաստունների Ատյանը անդամագրման դիմումին գրավոր պատասխանում է առավելագույնը երեք ամսում: Մերժման դեպքում՝ հիմնավորում է:

3.4. Կազմակերպության անդամները կարող են.

- ելնել Կազմակերպությունից իրենց դիմումի համաձայն,

- հեռացվել Իմաստունների Ատյանի որոշմամբ, սույն կանոնադրությամբ՝

ա) նախատեսված իրենց պարտականությունները չկատարելու համար կամ՝

բ) անդամության անհրաժեշտ պայմանների հետ անհամապատասխանություն ծագելու դեպքում:

Դ. Կազմակերպության անդամների իրավունքները եւ պարտականությունները

1. Կազմակերպության անդամը իրավունք ունի.

- կազմակերպության աշխատանքների վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, դիտողություններ, մասնակցել Կազմակերպության նպատակների իրականացմանն ուղղված աշխատանքներին,
- մասնակցել Կազմակերպության միջոցառումներին, այդ թվում՝ Համագումարին, ինչպես նաեւ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին, ծանոթանալ Կազմակերպության բոլոր փաստաթղթերին,
- ընտրել եւ ընտրվել Կազմակերպության մարմիններում,
- իր դիմումով ելնել Կազմակերպության անդամությունից,
- գրավոր բողոքարկել Կազմակերպության լիազորի՝ (Չարքաշ կամ Անձնվերի) եւ/կամ Իմաստունների Ատյանի կամ Վարքի Ատյանի որոշումներն ու գործողությունները Կազմակերպության վերստուգողին՝ Նայողին եւ Համագումարին,
- կազմակերպության մարմինների որոշումները բողոքարկելու համար կազմակերպության Համագումար հրավիրելու նպատակով գրավոր պահանջով դիմել կազմակերպության Իմաստունների Ատյանին:

2. Կազմակերպության անդամը պարտավոր է.

- կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները,
- յուրաքանչյուր ամսվա վերջին վճարել անդամավճար՝ ամսական հազար դրամ,
- մասնակցել Կազմակերպության աշխատանքներին ու նրա կողմից կազմակերպված միջոցառումներին,
- բարեխղճորեն կատարել Կազմակերպության Իմաստունների Ատյանի եւ/կամ Վարքի Ատյանի՝ իրենց վերաբերվող որոշումները:

Ե. Կազմակերպության կառուցվածքը

1. Համագումարը

- 1.1. Կազմակերպության բարձրագույն մարմինը կազմակերպության Համագումարն է:
- 1.2. Կազմակերպության Համագումարը օժտված է կազմակերպության կառավարման եւ գործունեության ներքին ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքով:
- 1.3. Համագումարի հրավիրումն ու անցկացումը իրականացնում է Կազմակերպության Իմաստունների Ատյանը:
- 1.4. Համագումարը հրավիրվում է երկու տարին առնվազն մեկ անգամ: Կարող են անցկացվել արտահերթ Համագումարներ: Համագումարները անցկացվում են Գյումրիում, այնպիսի վայրում, որ Գյումրիում գործող ցանկացած տաքսու վարորդ կարողանա ինքնուրույն եւ ժամանակին գտնել Համագումարի վայրը:
- 1.5. Կազմակերպության անդամների 1/3-ի կամ կազմակերպության Նայողի պատճառաբանված պահանջի դեպքում, ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում, հրավիրվում եւ տեղի է ունենում կազմակերպության արտահերթ Համագումար, որի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն հերթական Համագումարի հրավիրման համար նախատեսված եղանակով՝ կանոնադրությամբ սահմանված ժամկետում, սակայն, ոչ ուշ, քան այդ ժողովի անցկացման օրվանից 3 օր առաջ:
- 1.6. Համագումարը բացված է հայտարարվում, եթե մասնակցում են անդամների (պատվիրակների) առնվազն կեսից ավելին:
- 1.7. Համագումարը որոշումներն ընդունում է, եթե կողմ են քվեարկում կազմակերպության անդամների (պատվիրակների) թվի կեսից ավելին:
- 1.8. Կազմակերպության Համագումարի բացառիկ իրավունքն է.
 - կանոնադրության ընդունումը, փոփոխումը, լրացումը,
 - երկու տարվա լիազորությամբ, փակ, գաղտնի քվեարկությամբ Կազմակերպության անդամներից ղեկավար (Կազմակերպության լիազոր (Չարքաշ եւ Անձնվեր), Իմաստունների Ատյան, Վարքի Ատյան) եւ վերահսկողություն իրականացնող (Նայող) մարմինների ընտրությունը: Վերջիններիս կազմերում պաշտոնի համատեղումը բացառվում է,
 - Կազմակերպության Չարքաշի (կամ Անձնվերի), Իմաստունների Ատյանի անդամների, Վարքի Ատյանի, Նայողի հրաժարականների ընդունումը,
 - վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը, բացի դատարանի վճռով վերակազմակերպումից,
 - կազմակերպության գործունեության եւ գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը,
 - լուծարման մասին որոշման ընդունումը, բացի դատարանի վճռով լուծարումից,
- 1.9. Համագումարը չի կարող իր բացառիկ իրավասության հարցերի վերաբերյալ որոշում ընդունելու իրավունքը փոխանցել կազմակերպության այլ մարմնի:
- 1.10 Կազմակերպության Համագումարը.
 - բաց է ցանկացած ունկնդրման համար,
 - լսում է Կազմակերպության Չարքաշի (կամ Անձնվերի), Իմաստունների Ատյանի, Վարքի Ատյանի, Նայողի հաշվետվությունները հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների մասին: Հաշվետու ժամանակաշրջանը համարվում է վերջին հաշվետվությունից հետո ընկած ժամանակահատվածը: Չարքաշի (կամ Անձնվերի), Իմաստունների Ատյանի, Վարքի Ատյանի, Նայողի առաջին հաշվետվության հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը համարվում է նրանց պաշտոնի ստանձնման օրը,

- կազմակերպության բարեկամներին եւ հյուրերին արտոնում է խորհրդակցական ձայնի իրավունքով ներկա գտնվել համագումարին:

1.11 Համագումարի ժողովի հերթական հրավիրման մասին Իմաստունների Ատյանը տեղեկացնում է Կազմակերպության բոլոր անդամներին եւ հյուրերին՝ ժողովից առնվազն 14 օր առաջ, իսկ արտահերթ հրավիրման մասին՝ 72 ժամ առաջ: Ծանուցման մեջ նշվում է ընդհանուր ժողովի անցկացման տեղը, ժամը, նախնական օրակարգը:

1.12 Համագումարի բացումից, ռեզլամենտի ընդունումից եւ գրագրի ընտրությունից հետո, նախնական օրակարգը լրացվում է անդամների բոլոր առաջարկներով՝ պարտադիր եւ հյուրերի առաջարկներով՝ Համագումարի որոշմամբ:

1.13 Համագումարի նիստերը վարում է Կազմակերպության Իմաստունների Ատյանի տարեց անդամը կամ՝ նրա հանձնարարությամբ՝ Իմաստունների ատյանի մեկ այլ անդամ:

1.14 Համագումարի նիստերի անցկացման համար վերջնական օրակարգի հաստատումից առաջ ընդունվում է ժողովակարգ.

- Սահմանվում են հաշվետվությունների, ելույթների, արձագանքումների տեւողությունները, եւ ընտրվում է գրագիր՝ արձանագրող,
- Համագումարի նիստերի ընթացքը արձանագրում է գրագիրը,
- Համագումարի նիստերի ընթացքը տեղեկության էլեկտրոնային գրանցման միջոցներով արձանագրելու համար ընդունվում է Համագումարի որոշումը,
- Համագումարի ընթացքը համացանցային (ինտերնետային) հեռարձակման համար ընդունվում է Համագումարի որոշումը,
- Համագումարի նիստերը գումարվում են մինչեւ օրակարգի սպառումը:

2. Կազմակերպության Իմաստունների Ատյանը

2.1. Կազմակերպության Իմաստունների Ատյանը ընտրվում է Կազմակերպության Համագումարում, կազմակերպության անդամներից, 2 տարվա լիազորությամբ:

2.2. Կազմակերպության Իմաստունների Ատյանը.

- բաղկացած է հինգ կամ ավելի, կենտ թվով անդամներից: Թիվը որոշում է Համագումարը,
- Նախագահ չունի, նիստերը նախագահում են անդամները՝ հերթով՝ ըստ տարիքի, սկսած տարեց անդամից,
- հաշվետու է.
 - ա) Համագումարին՝ պարտադիր,
 - բ) Նայողին՝ ըստ վերջինիս պահանջի:

2.3. Կազմակերպության Իմաստունների Ատյանը Համագումարների միջեւ ընկած ժամանակամիջոցում.

- աշխատում է անվճար,
- կատարում է Համագումարում ընդունված եւ իրեն վերաբերվող որոշումներն ու ցուցումները,
- կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքների եւ տույժերի միջոցներ,
- քննարկում եւ հաստատում կամ մերժում է Կազմակերպության խնդիրների ու նպատակների իրականացմանն ուղղված եւ խորհրդի հաստատմանը ներկայացված Կազմակերպության Չարքաշի (կամ Անձնվերի) նախագահի ծրագրերի նպատակայնությունը, իրականացման մեխանիզմները,
- Կազմակերպության Չարքաշին (կամ Անձնվերին) ներկայացնում է Կազմակերպության նպատակների ու խնդիրների իրագործմանն ուղղված առաջարկներ,

- որոշում է ՀՀ-ում եւ արտասահմանում Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ, տնտեսական ընկերություններ, ՁԼՄ-ներ հիմնել՝ գործող օրենսդրություններին համապատասխան,
- սույն կանոնադրության եւ Համագումարի որոշումներին համապատասխան իրականացնում է Կազմակերպությանն անդամագրման ու անդամությունից ազատման գործընթացը,
- վարում է Կազմակերպության անդամների հաշվառումը,
- կազմում, հաստատում է Համագումարին ներկայացվելիք իր գործունեության՝ հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող հաշվետվությունը,
- մշակում եւ կազմում է հերթական կամ արտահերթ Համագումարի նախնական օրակարգը, ընդգրկելով կազմակերպության Չարքաշի (կամ Անձնվերի), իր, Վարքի Ատյանի եւ Նայողի հաշվետվությունները, Համագումարի իրավասություններում գտնվող հարցերը, այլ հարցեր,
- կազմակերպում եւ հրավիրում է Համագումարը, տեղեկացնելով կազմակերպության անդամներին եւ հյուրերին ժողովի տեղը, օրը, ժամը, նախնական օրակարգը:

2.4. Կազմակերպության Չարքաշի (կամ Անձնվերի) կամ Նայողի՝ իր պարտականությունների հետագա կատարման անհնարիության դեպքում (դրախտ, հրաժարական, հիվանդություն, ազատագրվում եւ այլն), հավաքելով կազմակերպության անդամների 1/3-ի համաձայնությունը հաստատող ստորագրությունները, հրավիրում է Կազմակերպության արտահերթ Համագումար:

2.5. Կազմակերպության անդամների 1/3-ի կամ կազմակերպության Նայողի պատճառաբանված պահանջի դեպքում, ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում, հրավիրում է Կազմակերպության արտահերթ Համագումար:

2.6. Կազմակերպության Իմաստունների Ատյանը իր նիստերը.

- գումարում է երեք ամսում առնվազն մեկ անգամյա պարբերականությամբ, բացառությամբ անդամագրման դիմումները քննելու եւ դրանց պատասխանելու դեպքերի, ինչպես նաեւ Կազմակերպության Չարքաշի (կամ Անձնվերի), Վարքի Ատյանի կամ Նայողի պատճառաբանված պահանջներով պայմանավորված դեպքերի, երբ Իմաստունների Ատյանի արտահերթ նիստը գումարվում է այդ պահանջների ստացումից հետո՝ եռօրյա ժամկետում,
- անցկացնում է նիստի սկզբում ընդունվող աշխատակարգով (ռեզլամենտով),
- արձանագրում է գրավոր՝ պարտադիր, էլեկտրոնային միջոցներով՝ Իմաստունների Ատյանի որոշմամբ:

2.7. Իմաստունների Ատյանի նիստը գումարվում է, եթե ներկա է Իմաստունների Ատյանի անդամների կեսից ավելին: Իմաստունների Ատյանը որոշում է ընդունում նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

2.8. Իմաստունների Ատյանի նիստը բաց է ցանկացած ունկնդրման համար:

2.9. Իմաստունների Ատյանը Կազմակերպության անդամներին անխոչընդոտ արտոնում է խորհրդակցական ձայնով մասնակցություն իր նիստերին:

2.10. Կազմակերպության Իմաստունների Ատյանը Նայողի պահանջով ներկայացնում է վերջինիս հետաքրքրող եւ Իմաստունների Ատյանի աշխատանքին վերաբերվող ցանկացած փաստաթղթի պատճեն եւ հարցի պատասխան:

3. Կազմակերպության լիազորը (Չարքաշ կամ Անձնվեր)

3.1. Կազմակերպության Չարքաշը իրականացնում է Կազմակերպության գործադիր կառավարումը Համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածներում:

3.2. Կազմակերպության Չարքաշը

3.2.1 ընտրվում է Կազմակերպության Համագումարում, կազմակերպության անդամներից, երկու տարվա լիազորությամբ:

3.2.2 Հաշվետու է համագումարին,

- 3.2.3. Իմաստունների Ատյանի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության նպատակների եւ խնդիրների իրականացմանն ուղղված ծրագրեր, ներկա է գտնվում Իմաստունների Ատյանում այդ ծրագրերը քննարկող նիստերին, հիմնավորում եւ պարզաբանում է դրանք, հաստատումից հետո ստանձնում է այդ ծրագրերի իրագործման ղեկավարությունը,
- 3.2.4. Կազմակերպության անդամներից գրավոր ընդունում է Կազմակերպության նպատակների եւ խնդիրների իրագործմանը վերաբերվող առաջարկներ, դրանց զարգացման նպատակահարմարության դեպքում, ծրագրավորում է, եւ ձեռնամուխ է լինում դրանց իրականացմանը: Գրավոր առաջարկներին պատասխանում է գրավոր,
- 3.2.5. իրականացնում է Կազմակերպության վարչարարությունը, ձեւավորում է իր աշխատակազմը,
- 3.2.6. կազմակերպում է աշխատանքային պայմաններ իր աշխատակազմի, Իմաստունների Ատյանի, Վարքի Ատյանի, Նայողի, ծրագրերի իրականացման համար,
- 3.2.7. վարում է իր տրամադրության տակ եղած փաստաթղթերի հաշվառումը, արխիվացումը,
- 3.2.8. Կազմակերպության անունից իր ստորագրությամբ կնքում է պայմանագրեր, համաձայնագրեր, որոնք չեն հակասում սույն կանոնադրությանը եւ գործող օրենսդրությանը,
- 3.2.9. Կազմակերպության անդամներին եւ հաստիքային աշխատողներին Կազմակերպության նպատակների եւ խնդիրների իրականացման նպատակով տալիս է օրինականության եւ բարոյականության շրջանակներում կատարման համար պարտադիր հրահանգներ եւ ցուցումներ: Չարքաշի եւ/կամ կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացուցային օրվա ընթացքում, պետական գրանցման մարմին է ուղարկում այդ անձի անձնագրային տվյալները եւ/կամ կազմակերպության գտնվելու վայրի նոր հասցեի մասին տեղեկությունները,
- 3.2.10. ՀՀ Արդարադատության նախարարության պահանջին ընդառաջ նրան է ներկայացնում Կազմակերպության Համագումարի որոշումների պատճենները եւ օրենքով սահմանված այլ տեղեկություններ,
- 3.2.11. առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելուց եւ կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, դիմում է պետական գրանցման մարմնին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու եւ հաշվառումից հանելու համար,
- 3.2.12. պարտադիր հրապարակում է Կազմակերպության գույքի օգտագործման տարեկան հաշվետվություն: Այդ փաստաթղթերը ներգրավում է Համագումարին ներկայացվելիք իր հաշվետվության մեջ:
- 3.2.13. Նայողի պահանջով ներկայացնում է վերջինիս հետաքրքրող եւ իր աշխատանքին վերաբերվող ցանկացած փաստաթղթի պատճեն եւ հարցի պատասխան:
- 3.5 Կազմակերպության Չարքաշը իրավասու է ամենուր ներկայացնելու կազմակերպությունը առանց լիազորագրի, հանդես գալ նրա անունից, ստորագրել ֆինանսական փաստաթղթեր, իրավասու է որոշում ընդունել գույք ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, օտարելու, դուրս գրելու վերաբերյալ:

4. Նայողը

4.1. Կազմակերպության Նայողը մեկ անձ է, որն ընտրվում է Կազմակերպության Համագումարում, Կազմակերպության անդամներից՝ երկու տարվա լիազորությամբ:

4.2. Կազմակերպության Նայողը իրականացնում է Կազմակերպության նպատակային եւ ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը, հաշվետու է միայն Համագումարին, պարտադիր հաշվետվությամբ հանդես է գալիս Համագումարում:

4.3 Նայողը իրավունք ունի.

- ներկա գտնվել Կազմակերպության Չարքաշի եւ նրա աշխատակազմի ցանկացած աշխատանքային գործունեության փուլի՝ առանց միջամտելու այդ աշխատանքին,
- ներկա գտնվել Չարքաշի (եւ նրա աշխատակազմի) ցանկացած արտաքին հարաբերության (բանակցություններ, զրույց, պայմանագրերի կնքում եւ այլն)՝ առանց միջամտելու այդ աշխատանքին,
- ներկա գտնվել Կազմակերպության Իմաստունների Ատյանի ցանկացած նիստի՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,
- իրականացնել կազմակերպության կանոնադրությունից կամ բարձրագույն մարմնի որոշումներից բխող այլ լիազորություններ:

4.4. Նայողն իրավունք ունի եւ պարտավոր է տարեկան առնվազն մեկ, բայց ոչ ավելի, քան երկու անգամ ստուգել Կազմակերպության Չարքաշի (եւ աշխատակազմի) եւ Իմաստունների Ատյանի աշխատանքը՝ հետեւյալ ձեւերով.

- ստանալ նախորդ ստուգումից հետո ընկած ժամանակահատվածում նրանց գործունեությանը վերաբերվող ցանկացած հարցի պատասխանը եւ/կամ փաստաթղթի պատճեն,
- մասնագետների օգնությամբ կամ ինքնուրույն ստուգել Չարքաշի եւ Իմաստունների Ատյանի գործունեության համապատասխանությունը գործող օրենսդրությանը եւ սույն կանոնադրությանը, իսկ որեւէ անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում անհապաղ տեղյակ պահել վերջիններիս,
- կազմել ստուգման հաշվետվություն եւ այն ընդգրկել Համագումարում ներկայացվելիք հաշվետվության մեջ:

4.5. Նայողը Կազմակերպության արտահերթ Համագումարի հրավիրման պահանջով իրավունք ունի դիմել Կազմակերպության Իմաստունների Ատյանին.

- Չարքաշի (աշխատակազմի) կամ Իմաստունների Ատյանի կողմից իրենց իրավասությունների գերազանցման դեպքում,
- գործող օրենսդրությանը կամ սույն կանոնադրությանը Չարքաշի (նրա աշխատակազմի) կամ Իմաստունների Ատյանի գործունեության անհամապատասխանության փաստի դեպքում,
- միայն Համագումարի իրավասությամբ անհետաձգելի լուծում պահանջող խնդիրների առկայության պարագայում,

4.6. Նայողը պարտավոր է ընդունել եւ լսել Կազմակերպության անդամի, Չարքաշի, Իմաստունների Ատյանի գրավոր բողոքները Կազմակերպության ընթացիկ աշխատանքների, Չարքաշի, Իմաստունների Ատյանի աշխատանքի եւ որոշումների որակների մասին, քննարկել, հանդես գալ լուծման առաջարկով, կամ դրանց լուծման համար՝ արտահերթ Համագումարի հրավիրման պահանջով դիմել Իմաստունների Ատյանի:

5. Վարքի Ատյանը

5.1. Այս կանոնադրության անքակտելի հավելվածներում ներկայացված Բլոտ խաղի Կանոնակարգի եւ Վարքականոնի պայմանների հսկողություն իրականացնում է Բլոտի ազգային լիգայի Վարքի Ատյանը, որը ընտրվում է Կազմակերպության Համագումարում, կազմակերպության անդամներից, 2 տարվա լիազորությամբ:

5.2. Կազմակերպության Վարքի Ատյանը.

- Նախագահ չունի, նիստերը նախագահում են անդամները՝ հերթով՝ ըստ տարիքի, սկսած տարեց անդամից,

- բաղկացած է հինգ կամ ավելի, կենտ թվով անդամներից: Թիվը որոշում է Համագումարը,
 - հաշվետու է Համագումարին
- 5.3. Կազմակերպության Վարքի Ատյանը Համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում.
- աշխատում է անվճար,
 - կատարում է Համագումարում ընդունված եւ իրեն վերաբերվող որոշումներն ու ցուցումները,
 - Խաղի Կանոնակարգի եւ Վարքականոնի խախտումների դեպքում անդամների նկատմամբ կիրառում է տույժերի միջոցներ՝ ըստ այդ հավելվածների,
 - կազմում, հաստատում է Համագումարին ներկայացվելիք իր գործունեության՝ հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող հաշվետվությունը,
- 5.4. Կազմակերպության Վարքի Ատյանը
- Այս Կանոնադրության երկու հարակից փաստաթղթերով՝ Խաղի Կանոնակարգով եւ Վարքականոնով սահմանված կանոնների պահպանն է,
 - Լսում է խաղի Կանոնակարգի եւ Վարքականոնի վերաբերյալ ինչպես նաեւ դրանց կիրառման արդյունքում ստացված բողոքները եւ լուծում դրանք: Եթե դրանց լուծումները հնարավոր են միայն Բլոտի ազգային լիգայի կանոնադրական փաստաթղթերի փոփոխությունների դեպքում, Վարքի Ատյանը Համագումար ժողովելու առաջարկությամբ դիմում է Իմաստունների Ատյանին,
 - Մրցաշարերի անցկացման դեպքում հաստատում է մրցավարների կազմը, ձեւավորում մրցաշարային աղյուսակը, հետոում է մրցաշարների կանոնների պահպանմանը,
 - Իր նիստերը գումարում է երեք ամսում առնվազն մեկ անգամյա պարբերականությամբ,
 - անցկացնում է նիստի սկզբում ընդունվող աշխատակարգով (ռեզլամենտով),
 - արձանագրում է գրավոր՝ պարտադիր, էլեկտրոնային միջոցներով՝ Վարքի Ատյանի որոշմամբ:
- 5.5. Վարքի Ատյանի նիստը գումարվում է, եթե ներկա է Վարքի Ատյանի անդամների կեսից ավելին: Վարքի Ատյանը որոշում է ընդունում նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
- 2.8. Վարքի Ատյանի նիստը բաց է ցանկացած ունկնդրման համար:
- 2.9. Վարքի Ատյանը Կազմակերպության անդամներին անխոչընդոտ արտոնում է խորհրդակցական ձայնով մասնակցություն իր նիստերին:

9. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ եւ հիմնարկներ ստեղծելու կարգը

1. Կազմակերպության նպատակների եւ խնդիրների իրագործման համար ծագած անհրաժեշտության դեպքում Կազմակերպությունը կարող է օրենքով սահմանված կարգով ստեղծել առանձնացված ստորաբաժանում(ներ) եւ հիմնարկ(ներ):
2. Առանձնացված ստորաբաժանում(ներ) կամ հիմնարկ(ներ) ստեղծելու առաջարկ Կազմակերպության նախագահին կարող է ներկայացնել Կազմակերպության անդամը:
3. Կազմակերպության Չարքաշը որոշում է ընդունում.
 - ա) առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ հիմնելու մասին, կամ
 - բ) առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ չհիմնելու մասին:
5. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումը կամ հիմնարկը իրավաբանական անձ չէ, գործում է Կազմակերպության հաստատած կանոնադրության հիման վրա, եւ Կազմակերպությունից կարող է օժտվել գույքով:

6. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանման կազմակերպման, գույքով օժտման, հաստիքային աշխատողների աշխատավարձերի, ընթացիկ եւ այլ ծախսերի ցանկը կազմում, մշակում, Իմաստունների Ատյանին ներկայացնում է Կազմակերպության Չարքաշը, հաստատում է՝ Իմաստունների Ատյանը՝ հերթական կամ արտահերթ նիստում:

Է. Կազմակերպության սեփականությունը, միջոցները եւ դրանց օգտագործման կարգը

1. Կազմակերպության սեփականությունը եւ միջոցները գոյանում են դրամաշնորհներից, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց նվիրատվություններից, Կազմակերպության հիմնած կամ մասնակցած առեւտրային կազմակերպությունների տնտեսական գործունեությունից ստացված եկամուտներից եւ ՀՀ օրենսդրությամբ չարգելված, այդ թվում՝ օտարերկրյա աղբյուրներից: Որպես նվիրատվություն կազմակերպության ստացած բոլոր գույքային եւ ֆինանսական միջոցները նվիրատուներին չեն վերադարձվում:
2. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակներին եւ խնդիրներին հասնելու համար ու ծրագրերի իրականացման նպատակով:
3. Կազմակերպության գույքը չի կարող բաշխվել նրա հիմնադիրներին եւ անդամներին:

Ը. Կազմակերպության գործունեության դադարեցման կարգը

1. Կազմակերպության գործունեությունը կարող է դադարեցվել Համագումարի որոշմամբ՝ անդամների (պատվիրակների) ձայների 2/3-ի կողմ քվեարկելու դեպքում կամ սնանկության պատճառով լուծարվելիս, կամ՝ դատական կարգով հարկադիր լուծարման պատճառով:
2. Կազմակերպության լուծարման մասին կազմակերպության Համագումարի որոշումը 10-օրյա ժամկետում կարող է բողոքարկվել դատարան, որը կարող է մինչեւ որոշում կայացնելը կասեցնել լուծարման գործընթացը:
3. Լուծարման դեպքում Համագումարը ստեղծում է լուծարային հանձնաժողով, որը կազմում է Կազմակերպության վերջնահաշվարկը:
4. Լուծարումից հետո մնացած միջոցներն ու գույքը ուղղվում են կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուն, մնացածը՝ ուղղվում է կազմակերպության կանոնադրական նպատակներին, դրա անհնարինության դեպքում՝ փոխանցվում է պետական բյուջե:

Բլոտի ազգային լիգայի նախաձեռնող խորհրդի կողմից

Հարգելի հետաքրքրված հասարակություն.

Այս Կանոնադրության հետ կապված բոլոր լրացումների եւ փոփոխությունների առաջարկները խնդրում ենք ներկայացնել գրավոր՝ էլեկտրոնային տարբերակով levon@asparez.am հասցեով, մինչեւ 2010 թվի դեկտեմբերի 23-ը ժամը 23:00: